

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԵԼ Է ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ ՆՈՐ ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

28.10.2024 11:42



ՀՀ փաստաբանների պալատի և ՄԱԿ-ի զարգացման ծրագրի համագործակցության շրջանակներում Շիրակի մարզի փաստաբանների համար կազմակերպվել է վերապատրաստման դասընթաց՝ նոր քրեադատավարական օրենսդրության վերաբերյալ:

Դասընթացը վարել է փաստաբան, ի.գ.թ. դոցենտ, ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի համահեղինակ Դավիթ Մելքոնյանը:

Երկօրյա վերապատրաստումն անցկացվել է Գյումրի քաղաքում՝ Նորվեգիայի Արտաքին գործերի նախարարության ֆինանսավորմամբ:



Նշենք նաև, որ մարզերի փաստաբանների համար անցկացվող աշխատաժողովներն ունենալու են շարունակական բնույթ:



Վերադառնալ `$(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })`